ՆՈՐ-ԴԱՐ

№ 197 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 20 Նոյեմբերի | 1885 | Չորեքշաբթի 20 Նոյեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 197

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հատով 5 կոպէկ:
Բաժանորդ են գրւում Թիֆլիզում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»:

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկերութեան համար՝ կրկնապատիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
Թիֆլիսում
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1886 ԹՈՒԱԿԱՆԻՆ
ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ և ԾՐԱԳՐՈՎ
(Երրորդ տարի)

Ծրագիր

I. Տէրութեան կարգադրութիւններ: II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին: III. Քրոնիկոն — լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ: IV. Թղթակցութիւններ—Կովկասից, Ռուսիայից և միւս երկրներից: V. Քաղաքական—Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր: VI. Խառն Լուրեր: VII. Հեռագիրներ: VIII. Առևտրական տեղեկութիւններ: XI. Խմբագրական պատասխաններ: X. Բանասիրական: Ֆելլիէտօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ: XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով:

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis (Caucas) Rédaction „Nor-Dar".

Открыта подписка
НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ
„КАВКАЗЪ"
На 1886 годъ (41-й годъ изданія).

Въ 1886 году газета „КАВКАЗЪ" будетъ выходить по прежней программѣ и подъ прежнею редакціею ежедневно не исключая и понедѣльниковъ.

Подписная цѣна.

Съ доставкою въ Тифлисѣ.		СЪ ПЕРЕСЫЛКОЮ. по Имперіи	по почтовому союзу
На годъ.	11 р. 50 к.	13 р.	18 р. 40 к.
„ полгода	6 р. — „	7 р.	10 р. — „
„ 3 мѣсяца. . . .	3 р. 50 к.	4 р.	6 р. — „
„ 1 мѣсяцъ. . . .	р. 50 к.	1 р. 75 к.	2 р. — „

Подписка принимается исключительно въ Конторѣ редакціи. Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.
Для иногор. адресовать: Тифлисъ, въ Редакцію газеты „КАВКАЗЪ".

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Բալկանեան գործերի մասին:
Քրոնիկոն.—Լուրեր: Ժամանակակից ժողովրդապետութեան սկզբունքներն ու արգասիքները:
Թղթակցութիւն.—Երևան:
Քաղաքական.—Լուրեր:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
Յայտարարութիւններ:
Բանասիրական.— Մատենախօսական ակնարկ:

Թիֆլիս, 19 Նոյեմբերի 1885 Թ.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Բալկան թերակղզու վերայ հետըզհետէ տեղի ունեցող անցքերին հետևողը գիտէ, որ Արևելեան Ռումելիայի միացումը Բօլղարիայի հետ՝ իշխան Ալէքսանդրին շատ նեղ դրութեան մէջ դրեց: Իշխանը ինքը բօլղարական միութեան գլուխ անցնելով յայտնեց, որ զէնքը ձեռքին պիտի պաշտպանէ միացեալ Բօլղարիան Սուլթանի, իւր մեծի դէմ: Բալկանեան միւս մանր պետութիւնները, ինչպէս Սերբիան, Յունաստանը, այդ միութիւնով Բալկանի վերայ հաւասարակշռութիւնը խանգարուած էին համարում, նրանք զինուելով պահանջեցին կամ նախկին դրութեան վերականգնումը կամ իրենց երկրների ընդարձակումը: Թիւրքիան նոյնպէս զինուեցաւ պահանջելով նախկին դրութեան վերականգնումը, իսկ մեծ պետութիւնները բօլղարական յեղափոխութիւնը և դրանից առաջացած միութիւնը ընդդէմ գտնելով Բերլինեան պայմանագրին, լիովին Թիւրքիային իրաւունք տալով՝ դատապարտեցին իշխան Ալէքսանդրի արած քայլը, և Արևելեան Ռումելիայի վերականգնումն անհրաժեշտ գտան:

Այս աննախանձելի դրութեան մէջ երբ իշխան Ալէքսանդրը ինչ անելիքը չը գիտէր, Սերբիան սուտ պատճառներ յօրինելով Բօլղարիայի դէմ պատերազմ է հրատարակում և զօրքերը իսկոյն Բօլղարիա մտցնում:

Բօլղարական զօրքերի մեծ մասը Թրքական սահմանների մօտն էր հաւաքուած, իշխան Ալէքսանդրը որքան տեղեակ էր Սերբիայի Միլան թագաւորի դիտաւորութեանը՝ այնուամենայնիւ նա չէր սպասում, որ սերբերը կը պատերազմեն բօլղարների դէմ: Սերբիայի թագաւորը լաւ զինուած և բազմաթիւ զօրքով մտնում է Բօլղարիա և ցիրուցան բօլղարական զօրքերին յաղթելով առաջ է գընում դէպի Սօֆիա, բօլղարական մայրաքաղաքը:

Եթէ սկզբումը իշխան Ալէքսանդրի դրութիւնը աննախանձելի էր, սերբիական զօրքերի նրա երկիրը մտնելուց յետոյ բոլորովին անել և կորած համարուեցաւ:

Սուլթանի դէմ ապստամբող իշխանը, որ զէնքը ձեռքին ուզում էր նրա դէմ մինչև արեան վերջին կաթիլը պաշտպանել բօլղարական միութիւնը, սերբիական թագաւորի ամարդի վարմունքից ստիպուած էր իւր գլուխը խոնարհեցնելու Սուլթանի առաջ, նաև օգնութիւն անգամ խնդրելու բօլղարներին ցեղակից քրիստոնեայ սերբերի դէմ:

Իշխան Ալէքսանդրը Թրքական սահմանները և Արևելեան Ռումելիան թողեց և դէպի սերբիական սահմանները շտապով գնացող բօլղարական զօրքերի գլուխն անցաւ Միլան թագաւորի դէմ իւր երկիրը պաշտպանելու համար:

Ընդհանուր կարծիք էր, որ Սերբիան կը յաղթէ, որովհետև նա աւելի շատ և աւելի լաւ պատրաստուած զօրք ունէր: Բայց ինչ եղաւ: Բօլղարացիները հայրենասիրական եռանդով վառուած և խորը վիրաւորուած սերբերի ամարդի վարմունքից՝ ամենայն քաջութեամբ դիմադրեցին թշնամուն: Իշխան Ալէքսանդրը իւր զօրքերին առաջնորդելով՝ հերոսաբար ջարդեց սերբիական զօրքերը և ամբողջ գծի վերայ ստիպեց սերբերին յետ քաշուելու: Բանը այնտեղն է հասել, որ այսօր ինքը Սերբիան է խնդրում մեծ պետութիւնների միջամտութիւնը, որպէսզի իշխան Ալէքսանդրը չը մտնէ Սերբիա, չը ոչնչացնէ իսպառ սերբիական զօրքը...

Որքան որ ցաւալի է, որ երկու քրիստոնեայ և ցեղակից փոքրիկ ազգեր միմեանց արիւնն են թափում, որքան էլ որ մեծ սխալ գործեց Սերբիան և փոխանակ զինուած դրութեան մէջ մնալու, որ իրեն զուցէ վերջումը աւելի օգուտ բերէր, պատերազմի մէջ մտնելով խայտառակութեամբ յետ մղուեցաւ, այնուամենայնիւ այդ պատերազմն իւր ելքովը իրեն օգուտներն ունի:

Եթէ Սերբիան յաղթէր, մեծ պետութիւնների գործը շատ պիտի դժուարանար, որովհետև եթէ վճռելու էլ լինէին, որ Սերբիան բօլղարական մի որ և է կտոր հողի չը տիրանայ, ո՞վ պէտք է այդ վճիռը կատարել տար այն դէպքում, երբ Սերբիան չը կամենար հնազանդել այդ վճռին:

Յայտնի է, որ մեծ պետութիւնների ներկայացուցիչները համաձայնուելով, որ Արևելեան Ռումելիան պէտք է վերականգնուի, չը գիտէին թէ ո՛ւմ ձեռքով գլուխ բերէին այդ, եթէ բօլղարները ընդդիմանային և իշխան Ալէքսանդրը չը կամենար հեռանալ Ֆիլիպպօպօլիից:

Սերբ-Բօլղարական պատերազմը, մեր կարծիքով, մեծ պետութիւնների գործը Բալկան մանր պետութիւնների վերաբերութեամբ թեթևացրեց և խաղաղութեան վերականգնումը ապահովացրեց՝ չը նայելով Թիւրքիայի և Յունաստանի չափազանց պատերազմական պատրաստութիւններին—եթէ ի հարկէ իրենք մեծ պետութիւնները ճշմարիտ խաղաղութիւն են ուզում և ոչ թէ պատերազմ:

Սկզբումը բոլոր դժուարութիւնը նրանումն էր թէ ինչպէս հեռացնեն իշխան Ալէքսանդրին Ֆիլիպպօպօլիից և նախկին դրութիւնը վերականգնեն հակառակ բօլղարական ազգի կամքին: Միւս կողմից եթէ բօլղարական միութիւնը ընդունուի, ինչպէս գոհացնեն Բ. Դրանը, Սերբիային, Յունաստանին, որոնք զինուած սպասում են և ամեն վայրկեան սպառնում եւրոպական խաղաղութեանը:

Այժմս սերբ-բօլղարական պատերազմը այդ դժուարութիւնները լուծեց: Ինքը իշխան Ալէքսանդրը և բօլղարները Արևելեան Ռումելիայից իրենց կամքով հեռացան և Սուլթանի գերիշխանութիւնը և իրաւունքները ճանաչեցին: Սերբիան զինուած Բօլղարիային սպառնալու և «Բալկանեան հաւասարակշռութեան» անունով մեծ պետութիւններին դժուարութիւններ պատճառելու տեղ, յաղթուած, ջարդուած գոհ կը լինի այսօր, որ ներքին դժուարութիւններից ազատ մնայ:

Ինչ վերաբերում է Յունաստանին, դա Սերբիան իրեն օրինակ առնելով, երևի յետ կը քաշուի և խաղաղ կը մնայ, որովհետև ո՞ւմ դէմ պէտք է պատերազմի նա, եթէ ոչ Թիւրքիայի դէմ, իսկ Թիւրքիան նրան կը ջարդէ: Թիւրքիան ևս տեսնելով որ իրեն համար շագանակները կրակից Սերբիան հանեց, հետևաբար զգոյշ քաղաքականութեան հետևելը իրեն օգուտ է բերում, այսուհետև ևս կաշխատէ աւելի խաղաղութիւնը պահպանելու մասին և ինքը չի ցանկալ արևելեան խնդրի յարուցմանը, որը թէ այսպէս թէ այնպէս միշտ իրեն համար կորուստով է վերջանում:

Այսպէս մենք տեսնում ենք, որ խաղաղութիւնը շուտով կը վերականգնուի, եթէ դրանց խանգարողները միմիայն Բալկանեան թերակղզու վերայ գոյութիւն ունեցող մանր պետութիւններն են: Ուրիշ բան է, եթէ մեծ պետութիւնները կամ դրանցից մէկը խաղաղութեան դէմ է, այն ժամանակ խաղաղութիւնը խանգարելու և ընդհանուր եւրոպական պատերազմ յարուցանելու համար նիւթեր շատ կան պատրաստ:

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեր ընթերցողների առանձին ուշադրութիւնը հրաւիրում ենք բանասիրական բաժնում հրատարակուած մեր աշխատակից պ. բժիշկ Արամեանցի „Մատենագրական Ակնարկ" խորագրով յօդուածի վերայ, որի սկիզբը նախընթաց համարում հրատարակուեցաւ: Մեր ժողովրդի կեանքի համար Ազգային Եկեղեցւոյ ունեցած մեծ նշանակութիւնը ըմբռնող իւրաքանչիւր հայ առանձին գոհութեամբ պիտի կարդայ այդ մի շարք յօդուածները:

—

ԲԱԳՈՒԻՑ. Իբրև հաստատ բան լսում ենք, որ մեր գիւղացիները իրենց դաշտային աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ իրենց գրաստները վաճառելու են՝ յարդի չքութեան պատճառաւ: Մթերքները թէև առատ են, բայց թանկութիւն է. ոչխարի միս ֆ. 10—11 կոպէկ է, տաւարինը՝ 8—9 կոպէկ. ձուի հատը՝ 3 կոպ. (Եկ հիմայ ապրի) պանիրի ֆունտը՝ 20—25 կոպ. շաքարի ֆունտը՝ 14½—15 կոպէկ. սառուցի պուդը՝ 45—50 կոպէկ, (Նոր ձիւն տակաւին չը կայ). Ֆօտօգէնի պուդը՝ 17—19 կոպէկ. առատ է և աժան Շամախւոյ Նոր գինին. սակաւ է և շատ թանկ՝ փողը:

—

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ. Յայտնի դերասան պ. Ադամեանը 2 անգամ դուրս եկաւ բեմ՝ ռուս դերասանների հետ: Ներկայացումները մեծ յաջողութեամբ վերջացան: Չը նայելով թատրոնի ընդարձակութեան, բայց դարձեալ շատերը առանց տոմսակի մնացին: Մայրաքաղաքից եկած ռուս դերասանները շատ գոհացուցիչ էին իրենց դերերում, բայց մեր «Հայ դերասանը» ամենին գերապանցում է և առանձնապէս փայլում է նրանց մէջ։ Այդ պարագայում միմիայն մեր „Կասպի“ լրագրի պ. ռեցենզենտն է, որ թատրոնի պ. դիրեկտորի հետ հաշիւ ունենալով—կուրացել է և չէ տեսնում փայլող աստղին իրենց բեմի հորիզոնում...

Մտաբերելով մայրաքաղաքների պ. պ. ռեցենզենտների անաչառ քննադատութիւնները և գովաբանութիւնները՝ պ. Ադամեանի վերաբերութեամբ և այժմ նկատելով մեր ռեցենզենտի արարքը, մենք ստիպուած պիտի լինենք հանգուցեալ Կռիլովի „Փիղ և քօթօթ“ առակը. չէ... Պ. Ադամեանի բենեֆիսի համար շատերը նուէրներ են պատրաստում։

—

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ գրում են. Տեղիս մի քանի պարոններ տուին 2 անգամ ներկայացումն. երկու անգամն էլ յաջող անցաւ և ժողովրդով լի էր դահլիճը։ Այս երրորդ թէ չորրորդ անգամն է որ մեր գիւղում ներկայացումն են տալիս և ժողովուրդը սիրով յաճախում է. խորհուրդ ենք տալիս տալ երբեմն ներկայացումներ, քանի որ ներկայացողների ջանքը վարձատրըվում է։

—

„Тиф. Объяв.“ լրագիրը հաղորդում է, որ Նոյեմբերի 17-ին Զուբալովի քարվանսարայի պատշգամից ընկաւ Կուրգենը Նախիջևանցի Ղազար Սահակեանը, որին հանեցին և ուշքի բերելուց յետոյ ուղարկեցին հիւանդանոց։

—

ԲԱԳՈՒԻՑ. Ս. Պետերբուրգից եկած հարուստ պ. Ուշակովը այստեղ է և մտադիր է 4 միլիոն պուդ փոտոգէն գնելու։ Ոմանք էլ հաւատացնում են, որ արդէն փոտոգէնը գնել է։

—

Անդրկովկասեան երկաթուղին շինելու ժամանակ, մի քանի տեղերում գտնուել են զանազան տեսակ առարկաներ, որոնք „Каспій“ լրագրի ասութեամբ, հնագիտութեան համար բաւականին մեծ նշանակութիւն ունեն։

—

„Նոր-Դար“-ի բաժանորդ են գրըվում խմբագրատանը, որը գտնվում է քաղաքի կենդրոնում պոստատանի և Տրոյիցկի (Սամերա) եկեղեցու հանդէպ։

Օտարաքաղաքացիները դիմում են „Նոր-Դար“-ի խմբագրութեան այս հասցէով. Тифлисъ, въ Редакцію „Нор-Даръ“.

—

Խմբագրութիւնս խոնարհաբար խնդրում է այն բաժանորդներից, որոնց վերայ ապառիկներ են մնում՝ շուտափոյթ հասցնեն իրեն։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ *)։

Թ. Աչէլիս.

Ժողովրդաբանութեան իսկական ըստեղծողն է Գերմանիայում Բաստիանը։ Նա, իբրև անվաստակ ուղեգնաց՝ բոլոր ցամաքները շրջել է ու երկար տարիներ երկրի զանազան գօտիների տակ ապրել, նոյնպէս և իբրև ժրաջան գրագէտ, որի հեղինակութիւններն արդէն մի պատկառելի մատենադարան են կազմում, նա միշտ ձգտել է բանիւ և գործով իւր գիտութեան նշանակութիւնը զանազան տեսակէտներից աշխարհին հասկանալի անել։ Իւր բազմամեայ ուղևորութիւններից յետոյ լոյս տեսաւ նրա առաջին երկասիրութիւնը ժողովրդաբանական բովանդակութեամբ 1859-ին։

Աչէլիսը իւր ներկայ յօդուածը հետևեալ խօսքերով է կնքում. „Եթէ նա (ժողովրդաբանութիւնը) քաղաքակրթութեան պատմութիւն լինելով հանդերձ, միևնոյն ժամանակ իբրև մարդկային մտքի (ինտելէկտի) պատմութիւն է հանդիսանում, եթէ նա կարող է անձնական մի հայեցակէտից մարդկային ազգի զանազան օրգանական ձևերի եղչաների զարգացումը ու ծնունդը վերլուծական եղանակով ապացուցանել, այն ժամանակ իւրաքանչիւր մարդկութեանի այն համեմատական համառօտ հայեցքում և իւր սեփական անձնաւորութեան իշխանը տեսնել, նա կը հասկանայ ու կ՚ըմբռնէ իւր սեփական հոգին և իրեն կը ընդունէ մի պատմութեան ամբողջացուցիչ մաս, որի հանդէպ նա մինչև այդ ժամանակ անկարեկից կանգնած էր իբրև մի օտար հանդիսական։

Մինչև հիմայ հոգեբանութիւնը շատ անձուկ շրջանում էր ներփակուած և միայն վերջին ժամանակներում լեզուաբանական ու ժողովուրդների հոգեբանութեան համեմատական հետազօտութիւնների միջոցաւ նրան մեծ ապագայի դուռ է բացվում. այս լոյսերը անհամար նիւթերի միջոցաւ, որ ժողովրդաբանութիւնը յանկարծ հետազօտութեանը ներկայացրեց, համարեա անսահման ընդարձակութեան հասած են երևում։

Փիլիսոփայական եղելութեան (Werden) ներքին օրգանիզմը կարող է միայն հոգեբանութեան մէջը ճանաչուել, այն հոգեբանութեան, որ ոչ միայն անհատի զարգացմանն է հետեւում, այլ և մարդկութեան, որը պատմութեան հիման վերայ է շարժվում։ Անհատին անխուսափելի լինելով մտնել ժողովրդական սերտ յարաբերութիւնների մէջ, որ թէև քաղաքակրթութեան զանազան աստիճաններում տարբեր կերպով ազդեցիկ է լինում, սակայն նա (անհատը) յարատև ենթակայ է լինում այդ ընկերական յարաբերութիւնների ազդեցութեանը։

Զանազան աշխարհահայեցողութիւնները, որոնք երևան են եկել ժողովրդի հոգու մէջ իբրև լեզու, կրօն, վարք, օրէնք և այլն, կարելի է իբրև մի մի հոգեկան օրգանիզմներ ըմբռնել, որոնց ծագումն ու շէնքը նոյնքան ևս ենթակայ են կենսաբանական (բիօլօգիական) ու ֆիզիքական օրէնքներին, որքան աշխարհի և մի այլ պրօցէս։

Երբէք չի յաջողուել լեզուի ու լեզուի կարողութեան ծագումը, կրօնի, օրէնքի, արուեստի և այլն սկզբնաւորութիւնը կենդանիների աշխարհից դուրս բերել, չը նայելով ամեն բացարձակ նմանողութիւններին. ընդհակառակը՝ խնդրի մշակմանը կը ծառայէ հանապազ մի որևէ ենթադրութիւն իբրև սկզբնակէտ, մի յայտնի ինքն ըստ ինքեան հասկանալի ձիրք, մի հակումն կամ մի ընդհանրութիւն, որ այս ևս ինքն ըստ ինքեան մակաբերելի (deducirbar) չէ լինում։ Եւ այսու ամենայնիւ սրանցից կարելի է բնական օրինաց համեմատ մի անվթար շէնք կառուցանել, եղելութիւնների մի այնպիսի շղթայ կռել, որ և մեզ բաց կանէ մի իրական դուռն այս ժողովրդաբանական արտադրութիւնների զարգացումն հասկանալու համար։

Ժողովրդաբանութեան ընդհանուր տեսութեան մէջ այս համարեա անվերջանալի նիւթի մասին գաղափար տալու համար՝ բաժանում են նրան մի քանի դիւրըմբռնելի հատուածների. Նախ՝ բանը վերաբերում է մարդկային ազգի ծաւալմանը ըստ տարածութեան ու սրանով պայմանաւորած քաղաքակրթութեան ընթացքին։ Այս ինքն ըստ ինքեան սոսկ արտաքին հանգամանքները, որոնց օժանդակում է կլիման, հողի յատկութիւնը, ցեղերի խառնուելն —տեղագրական փոփոխութիւններն ընդհանրապէս, արտափայլում են հոգեկան արտադրութիւնների, զգայութիւնների ու զգացմունքների մէջ։ Միօրինակ տարրական մտքերը ամենուրեք անյեղյեղ կանոնադրութեամբ ծլելով զարգանում ու հասնում են լուսաւորութեան այն երկնային տուրքի աստիճանին, որի համար այս կամ այն ժողովուրդը իրեն նախասահմանած է համարում։

Որքան աւելի պակասաւոր զարգացման է հասած վայրենի մարդու տեսութիւնը բնական ազդեցութիւնների մասին, նոյնքան ևս աւելի հանելուկներ են օրէց օր, ժամ առ ժամ երևան գալիս նրա հոգւոյ մէջ, դրանցից մանաւանդ նրանք ստիպողական լուծումն են պահանջում, որոնք անմիջապէս իւր մտածման ու զգացման, այսպէս ասած, իւր օրական փորձնական կեանքի հետ սերտ շաղկապուած են։ Վայրենին իրեն անհասկանալի երևոյթների տպաւորութեան ներքոյ՝ սկսում է իրեն անտեսանելի ու անյայտ էակներ երևակայել. այս էակները թափանցելով իւր միտքը՝ սկսում են իշխել նրա հոգու վերայ ու մի մի բռնակալներ դառնալ նրա համար։ Իւրաքանչիւր էակ, իւրաքանչիւր բոյս ու մինչև անգամ քար, այս ըմբռնողութեամբ՝ մի ոգի և դևի բնակարան կը լինի վայրենու աչքում, մինչև այն աստիճան է արմատ ձգում այս համոզմունքը նրա մէջ, որ նա երկնչում ու խուսափում է մի բոյս քաղել, այլ խօսքով՝ նրա համար գոյութիւն չունի իրաւաբանական յայտնի հիմնական օրէնքը res nullius (իրերի անտէրութիւնը). Հուսկ եկեղեցական ծիսակատարութիւնների արտայայտած տրամադրութիւնից յետոյ, նա համարձակում է բնութեան առարկաները իրեն սեփականացնել, որովհետև նա առաջ երկնչում էր իրեն օտար և գուցէ իրենից աւելի զօրաւոր գոյութեան պատկանեալ շրջանին ձեռնամուխ լինել։ Միայն իւր նման մարդը նրա համար ոչինչ զարմանալի բան չէ պարունակում իւր մէջ, և այս պատճառով մեր վայրենին նրա հետ բոլորովին հաւասար կերպով է վարվում, այլ է օտարը, որ մի տեսակ բացառութիւն է կազմում նրա աչքում, միայն այն գործնական փորձառութիւնը, որ նա (օտարը) էլ իւր հետ մի և նոյն բնական օրէնքներին է ենթակայ, զրկում է օտարին իւր նախկին բնազանցական փայլից։ Վայրենին վերագրում է բնութեան երևոյթները բնազանց էակներին, դևերին. Ծով ու գետը մի այսպիսի մարդ է, որին պարգևում է նոյնպիսի ոյժ, ինչպիսին ինքը վայրենին ունի, միայն գետը աւելի հուժկու և անկախ է։ Խաւարի մէջ մեծատող ու վառ երևակայութեան տէր մարդը իրենից և դիրքով և արժանաւորութիւններով բարձր անձնաւորութիւններին անհասանելի, բնազանցական ոյժեր է վերագրում, սրանց բարձրացնում է չաստուածների աստիճանը և այսպէս իւր անձն ու հոգին ստրկացնում է այդ չար ու բարի չաստուածների քմահաճ կամայականութիւններին։ Վերջապէս որքան աւելի նուազում է սկզբնական երևակայական պատկերների նիւթեղ գոյութիւնը, նոյնքան ևս առաւել երևում է բազմաստուածութեան անհուն քաոսի անօսրանալը, և այս ժողովրդեան կրօնի անհման ու փիլիսոփայական միաժամանակեայ սկեպտիքական նախապատրաստական աշխատութեան շնորհիւ՝ միաստուածութեան պատրաստութիւն է տեսնվում. սակայն հարկ է առանց ուշադրութեան չը թողնել և

---

*) «Unsere Zeit» ամսագրից։ Վերոյիշեալ յօդուածների նոյն խնդրի վերաբերութեամբ գրածներից մէկը թարգմանեցի «Նոր-Դարի» համար «Deutsche Revue» ամսագրից։ Ներկայ գրուածքը անցեալի ընդարձակութիւնն ու շարունակութիւնը կարելի է համարել։

Թարգ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ *)

„Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ պատմութիւն“. Յուսիկ վարդապետի Մովսիսեան. Տես „Արարատ“ ամսագրի 1884 և 1885 թ. համարներում.

III

Ազգը մի այսպիսի եկեղեցական պատմութեան կարօտ էր։ Բայց արդեօք դիւրին բան էր այս ճշմարտութիւնը յառ տնուած ժամանակ պահանջուած ծրագրով եկեղ. պատմութիւն յօրինելը։ Նրա համար ամեն բան պակասումէր։ Բայց ամենից առաւել զգալին այն էր, որ չկար գիտուն ճարտարապետ, որ կառուցանելու շինութեան նպատակին իմանար և ինքնուրոյնութեան ոճը պահպանէր։ „Պատմաբանի մէջ գիտնականը և ճարտարապետը իրարու հետ անբաժան միացուած են“. ասում է Տէնը Տիտոս Լիւի հռովմէական պատմութեան քննութեան մէջ. „Երկու հանճարները իրարու օգնում են, կամ լաւն ասած՝ մի ամբողջութիւն են կազմում, մերթ նիւթ պատրաստելով, մերթ ամփոփելով և պատրելով, և՝ կրկնուելով միևնոյն առարկային երկու անգամ՝ հաւասար խորագիտութեամբ բաց են անում նրա մէջ առաջ ճշմարտութիւնը, յետոյ կեանքը»։

Ամենից առաջ հարկաւոր էր նիւթ պատրաստել, յետոյ քննել դրանց յատկութիւնները, համեմատել նրանց ներքին արժանիքը և ապա դասաւորել այնպէս, որ լինէր մեր եկեղեցւոյ պատմութիւնը մեր աչքին մի ներդաշնակ, ամբողջացած և հրապուրիչ զէնք դառնար, որպէս զի նրա մէջ մտնողը ասէր թէ՝ ահա սա է Հայաստանեայց եկեղեցւոյ փնտռութեան հրաշալի հանդիսարանը, որ լինէր [illegible] է գեղեցիկ Փրկչի, պսակեալ է նմին ՚ի Փրկչէ, [illegible] և անխզելի [illegible] և վերջապէս [illegible]։

Բայց որտեղից պիտի քաղուէին հարկաւոր նիւթերը, „Վարք սրբոց“-ից կամ „Յայսմաւուրք“-ից։—Սրանք, թէքան ևս մեր հայերի համար, ջերմեռանդ սրտերի համար գրուած գրքեր լինէին, այսու ամենայնիւ եկեղեցական պատմութեան նախամեծար նշանակութիւն չէին կարող ունենալ։ Չամչեանը արդեօք.—Այս աղբիւրը բոլորովին վտանգաւոր էր ազգային եկեղ. պատմութեան համար նիւթ ժողովելու և մշակելու։ Նոյն իսկ մեր ազգի կարօտած եկեղեցական պատմութիւնը՝ Չամչեանի ընդարձակ հատորների մէջ եղծուած ճշմարտութիւնը վերականգնելու նպատակը պիտի ունենար։

Կասեն մեզ. Մխիթարեանց աղբիւրները միմիայն սրանք էին։ Այո սրանք էին գլխաւորները։ Իսկ եթէ կային ուրիշ առձեռն պատրաստի նիւթեր՝ որպէս արդիւնք մեր նախնեաց մտաւոր երկասիրութեան, այս բոլորը տպագրութիւնից առաջ Մխիթարեանների սրբագրութեան ճախարակից անցնելով՝ այնպիսի ապականիչ խմորով էին զանգուած, որ դրանց վերայ հիմնուած եկեղեցական պատմութիւնը ուղղակի հակառակ ազդեցութիւն էր գործելու ուսանողի մտքի վերայ։ Այս գիտութեան վերաբերմամբ վենետիկցիք մեր մտքի և խղճի միահեծան իշխողներն էին և օրէնսդէտները։ Նրանց առաջնորդութեամբ վարվում էր ոչ միայն ռամիկը, այլև մեր ուսուցիչը։ Չամչեանի պատմածը ոչ միայն հալած մեղք էր, այլ և մեղք՝ եթէ կասկած լինէր։ „Հիւսիսափ.“ և „Կռունկ“-ի անողոք ու անաչառ քննութիւնն էր հարկաւոր, որ Մխիթարեանց ժանտ սերմի ծնունդները քարին խփուելով՝ փշրուէին, հայի կախարդուած միտքը սթափուէր, և ազգային հոգևոր-բարոյական լուսաւորութեան համար կարևոր գիտութիւնները, մանաւանդ եկեղ. պատմութեան ուսումը՝ թշնամական ոտնից մաքրուելով և մոլորեցուցիչ տենդենցիաներից ազատուելով՝ բնական հողի վերայ ծլէին ու ծաղկէին։

Կարո՞ղ էր արդեօք մի իմաստուն հայրենագէտ քսան և հինգ տարի սրանից առաջ փորձել ազգ. եկեղեցւոյ պատմութիւնը գրել նրա հարազատ աղբիւրների վերայ հիմնուելով։—Երբեք ոչ։ Բնագրումով, կամ աշխարհախարդախութեան մի քանի փաստերով նա գուցէ կարողանար ենթադրել, որ վենետիկցիների ընծան Տանայոսի նուէրն է։ Բայց անկարող էր խարդախութեան ցանցի բոլոր թելերը գտնել։ Այդ պատմութիւնը գրել ցանկացողը՝ եթէ գերբնական հանճար ևս ունենար և տիտանական ջանասիրութիւն, ամեն կողմից յուսահատ՝ միմիայն իւր վերայ պիտի դնէր իւր յոյսը։ Ամենից առաջ հարկաւոր էր մի կողմը դնել, կամ լաւ ևս ասել՝ այրել այն բոլորը, որով Մխիթարեանք երկար ժամանակի ընթացքում կուտակել էին մեր գրականութեան ասպարիզում նախնեաց հեղինակութիւն անուանելով։ Դրանք բոլորը այս ու այն կերպով եղծուած էին բնագրի հարազատութիւնից, եթէ վերաբերում էին մեր եկեղեցւոյ պատմութեան այս ու այն կէտի, անցքի և դէպքի ճշմարիտ լուսաբանութեան։ Խարդախութիւնը եղած է կամ ամբողջ պարբերութիւններ բաց թողնելով, կամ մտցնելով և կամ տրոհութեան նշանները խանգարելով, այլ ես չեմ ասում, որ բոլորովին լռութեան են տուել այն բոլոր երկասիրութիւնները, որոնց եղծելը ոչ մի կերպով անհնարին էր։—Դրանք արդէն իրենց բովանդակութեամբ՝ պապական և քաղքեդոնական ձգտումների համար հատու սուր էին։ Մխիթարեանք այս խարդախութեանը մէջ մի այնպիսի հաստատ նպատակ էին դրած, որ մինչև անգամ մի հանրածանօթ մատենագիր, ինչպէս Գրիգոր Նարեկացին, որ մինչև նրանց տպարանից 1827 թ. գալը, բուն հայկական մամուլի մէջ ուղիղ վեց տպագրութիւն է ունեցել՝ սկսած Երուսաղէմի Մինաս պատրիարքի ամենահարազատ օրինակի տպագրութիւնից 1700 թ.,—Մխիթարեանք հարկաւոր են համարել աղճատելը՝ տրոհութեան նշանները աղաւաղելով։

Այսպիսի անհնարին պայմանների մէջ՝ ազգային եկեղեցւոյ հարազատ ու իսկական պատմութիւնը ուսումնասիրել ուզողին մնում էր մի միջոց— դառնալ գրչագիրների քննութեան, որոնք թափուած վանքերի խոնաւ նկուղներում, բորբոսնում, մաշվում ու ցեցակեր էին դառնում։ Բայց այս միջոցը նոյնպէս իւր անյաղթելի արգելքներն ունէր.—Նախ որ դժուար էր հարկաւոր նիւթերը մի տեղ ժողովուած գտնել։ Եթէ գտնում էին ևս, ինչպէս Ս. Էջմիածնի մատենադարանում.—հարազատութեան և վաւերականութեան նկատմամբ, կարօտ էին ամենանուրբ հետազօտութեան։

Եւ այդ հետազօտութիւնը հեշտ բան չէր, որովհետև մեր եկեղեցւոյ պատմութեան վերաբերեալ աղբիւրները ապականուած ու աւերուած էին ոչ միայն ժամանակի ազդեցութեամբ և գրիչների տգիտութեամբ, բայց որ մեծն է և գլխաւորը՝ պրոպագանդայի (ունիթոռների) մարտաների ապականութեամբ, որոնք որքան

---

*) Տես „Նոր-Դար“ № 196

այն երևոյթը, որ բաւականին ստոր ցեղերի ոգիները արդէն ի վաղուց անտի տոգորուած էին տիեզերքի միայնական ղեկավարութեան վերաբերեալ զանազան նախազգացումներով, չընայելով այդ ոգիների բազմաստուածութիւնից դեռ պաշտպանուած լինելուն։

Մի այլ նշան է հոգեփոխութիւնը, որը կրօնների պատմութեան մէջ մի անձնական նշանակութիւն ունի. ցեղապետի հոգին կարող է ոչ միայն ցեղական աստծու վերափոխուել կամ իրեն մի որ և է կենդանի իբրև ներկայացուցիչ (նշանակ-սիմբօլ) ընտրել, որ այնուհետև աստուածային փառք է վայելում, այլ և այդ հոգին կարող է իւր անմիջական շօշափելի նիւթականութեամբ գոգցես աշխարհս իւր անմահութիւնը իրականացնել։ Հոգին անընդհատ տևողականութեամբ կրկին ու կրկին կը վերածնի այս կամ այն արտաքին պատեանում, մինչև որ նա, ըստ հնդկական բրահմայականութեան՝ կը միանայ վերին էակի հետ ի յաւիտենական անգործութիւն։

(Կը շարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, 11 Նոյեմբերի.—Անցեալ օրերի մէկում երբ տանից խանութ էի գնում ուղիղ ժամի 9-ին՝ պատահեցի մի ժամհարի, որի ձեռին մի թուղթ, փնթփնթալով գնում էր. հետաքրքրութիւնս շարժուելով առաջ կարդացի, այսպէս հասկացայ, որ կոնսիստորի հրամանի զօրութեամբ գործակալը հրատարակում է, որ այսուհետև՝ նշանուած տղան և օրիորդը պէտք է իրենց ծննդեան և մկրտութեան վկայականները հանեն կոնսիստորից և յետոյ իրաւունք ունենան պսակուելու։ Այդ օրը կարծես թէ՝ ես փոխուեցի—մտատանջութեան մէջ ընկայ և հոգեակս տխուր էր։ Խանութիս հարևանները հարցրին տխրութեանս պատճառը։ Պատմելուց յետոյ հանգամանքը ես աւելացրի թէ՝ մի՞թէ կարելի է այսպիսի կարգադրութիւն բղխել կոնսիստորից, որը կարող է յուսահատութեան հասցնել շատ մարդկանց և ստիպել ապօրինի կին պահելու։ Հարևանս ինձ սաստից թէ այսպէս խօսքեր ասելը ամօթ է։ Իրաւ է ամօթ է, բայց վաղը ես եղբօրս, դու տղիդ, և միւսն իւր աղջկանը պէտք է պսակէ, որին փող տանք, մեր տէրտէրներին տանք, վանքին տանք, գործակալին տանք, զուռնաչուն տանք, եկեղեցուն տանք, ժամհարին ու տիրացուին տանք, կոնսիստորին տանք. Թէ միւս ծախքերն հոգանք, ինչ անենք։ Իմ պսակի ժամանակ այնքան առեցի, որ մինչև հիմայ էլ խելքս գլուխս չի գալիս։ Ինչ որ մարդու պարտքն է, տալը նեղութիւն չէ, իսկ ինչ որ աւելին է, մի մեղադրէք ինձ, ընթերցող, շատ ծանր է։ Սրա վերայ հրաւիրում ենք սրբազանի ուշադրութիւնը։

Անցան սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները. մեր առուտուրը չի շարժվում, ժողովուրդը նիսիա է ուզում. նիսիա տալը հեշտ է, առնելը դժուար։ Ժողովուրդը ինչ անէ. գինին ու արաղը կարասը լցուած առնող չը կայ. ցորեն, գարի, ոսպ, լոբի, սիսեռ, մսացու տաւար, ոչխար, հաւ, ձու շատ ու շատ էժան են։ Բերողներն օրերով նստում են, վերջը տալիս են էժան ու գնում։

Մի վաճառական

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ։ Ֆրանսիական մինիստրութեան ճգնաժամի գոյութիւնը անկասկածելի է։ Վերջին հեռագիրների ասութեամբ, ձախակողմեան ժողովը վճռեց խնդրել Բրիսսօնին, որ նա չյապաղեցնէ հասարակապետութեան նախագահ ընտրելու համար ժողովի կայացումը։ Այդ ժողովում խօսացած ճառերը ներկայ գտնուողների մէջ մեծ տարաձայնութիւնների պատճառ եղան։ Ճգնաժամի գլխաւոր պատճառը ներման խնդիրն է։ Այդ խնդրի վերաբերեալ մինիստրութեան անդամների ձայները երկու մասի բաժանուեցան։ Բրիսսօնը, Ալլէն-Տարժէն և մի քանի մինիստրներ պնդում էին, որ ներումը տրուի միայն Կոմմունալիստներին, Լուիզա Միշէլին և Լիոնի երկու անիշխանականներին։ Իսկ Գրեվին և ուրիշները ցանկանում են, որ ներումը ընդհանուր լինի։ Ի նկատի ունենալով այս տարաձայնութիւնները, Բրիսսօնը և նրա մինիստրութեան մի մասը վճռեցին հրաժարուել պաշտօնից։

—

ԿԱՆԱԴԱ.—Հիւսիս արևմտեան Կանադայում մետիսների վերջին ապստամբութեան գլխաւոր Րիէլը, Նոյեմբերի 4-ին պատժուեցաւ հեծելազօր ոստիկանների զօրատանը, Րէժինի մօտ։ Ահա այն հանգամանօրէն տեղեկութիւնը այդ պատժի մասին, որը հաղորդում են անգլիական լրագիրները։ Այն անձը, որին յանձնարարած էր կատարել պատիժը, նախընթաց երեկոյի, ութն ժամին հասաւ Րէժինա։ Մի ժամից յետոյ, Րիէլի սենեակում, շերիֆը կարդաց նրա դատավճիռը։ Կալանաւորը դատավճիռը լսում էր հանգիստ մինչև անգամ շնորհակալութիւն արեց շէրիֆին, որ նա անձամբ եկել է նրա մօտ։ Յետ այնորիկ Րիէլը յայտնեց, թէ նա կը ցանկար, որ նրա մարմինն թաղուէր ս. Բոնիֆացիուսի գերեզմանատանը։ Մինչև կէս գիշեր Րիէլը մնաց պաստօրի հետ և արդէն լուսադէմին քնեց։ Զօրատան պահպանելու համար խիստ հսկողութիւն գործ դրին և արգելեցին, ոչ ոք իրաւունք չունենայ ներս ու դուրս անելու։ Պատժից առաջ, երկու քահանայ պատարագ մատուցին, որի ժամանակ Րիէլը աղօթում էր ծնկաչոք։ Երբ նրան յայտնեցին, թէ պատժի ժամը հասել է, նա մնաց բոլորովին հանգիստ և չը գունաթափուեցաւ։ Սկզբում Րիէլը կամենում էր մի ճառ խօսել, բայց քահանաները արգելեցին։ Յետ այսորիկ նա յանձնեց իւր անձը դահճին և աղօթում էր։ Րիէլի վերջին խօսքերը եղան «Ողորմեա Յիսուս»։ Րիէլի պատժի լուրը „Times“-ի հեռագրի ասութեամբ, Կվէբէկի Ֆրանսիական ժողովրդի մէջ վրդովեցուցիչ ազդեցութիւն ունեցաւ։ Ֆրանսիացիները մտադիր են Րիէլի պատժի դէմ բողոք բառնալ։ „Daily News»-ի ասութեամբ, Կվէբէկի Ֆրանսիական թաղը սուգ հագաւ։ Ֆրանսիական մամուլը, մանաւանդ «Temps»-ը և «Journal de Dèbats»-ը այդ պատժին առթիւ, սաստիկ յանդիմանում և պախարակում են Կանադի անգլիական կառավարութեանը։

—

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԲԻՐՄԱՆԻԱ.—Գեներալ Պրենդերգաստը, Մինհլայի մօտ, բիրմանացիների հետ կռուելով արեց առաջին յաղթութիւնը։ Մինհլայի մի փոքրիկ քաղաք է, հինգ հազար բնակիչներով և գտնվում է Իրրավադի գետի ափում, Բիրմանացիները պաշտպանում էին քաղաքը նոր ձևի շինած ամրութիւններով և զէնքերով։ Պրենդերգաստը մօտեցաւ քաղաքին Նոյեմբերի 4-ին իւր զօրախմբով, որ բաղկացած է 3 եւրոպական վաշտերից, 4 հնդկական գնդերից ու մի գունդ ռմբաձիգ զօրքերից։ Յարմար ժամանակից և իւր զօրքի լաւ դրութիւնից օգուտ քաղելով, երեք ժամ կռուելուց յետոյ, նա գրաւեց ամրութիւնը, ուր անգլիացիները քիչ վնաս ունեցան։ Յաղթողի առաջ Մանդալայի ճանապարհը բաց է։ Սակայն նրանք դեռ ևս չեն հասել Տիբօ թագաւորի մայրաքաղաքին։ Ասում են, որ Մանդալայ հասնելը շատ դըժուար է։ Իրրավադի գետը այդ տեղում շատ պտոյտներ է անում, այնպէս որ նրա վերայ նաւով գնալը դըժուար է։ Այդ տեղը անցնելու համար, հարկաւոր է գտնել լաւ նաւապետ, որը նոյնպէս դժուար է։ Կարծում են, որ անգլիացիները կը հասնեն Մանդալային 8 կամ 10 օրից յետոյ, եթէ ուրիշ արգելքներ չը լինեն, ինչպէս վերոյիշեալը։

—

Նոյեմբերի 3-ին, Զեմլինից հեռագրում են Վիեննայի լրագիրներին, որ նախ քան Բուլղարիային պատերազմ յայտնելը, զինուորական խորհրդում, կարգադրուեցաւ որ պատերազմի գլխաւոր նպատակն է տիրել Սոֆիան։ Բուլղարական մայրաքաղաքը համարվում է լաւ գրաւական, նրա համար, որ կատարեն Սերբիայի պահանջը։ Արդէն ռումէլիական յեղափոխութեան սկզբում, Սերբիան պահանջեց հին-Սերբիայի նահանգները Տրն, Բրէզնիկ և Վիդդին քաղաքներով, որոնք համաձայն Բերլինի դաշնագրութեան անցել են Բուլղարիայի ձեռքը և որոնց բնակիչները սերբեր են։ Եթէ Բուլղարիան այդ զիջումն անէ, այն ժամանակ Սերբիան համաձայն է ըստ իւր կարողութեան օգնելու Բուլղարիայի միութեանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդագրութիւն Գերմանիայում։ Բեռլինի աշխարհագրական բիւրօն Գերմանիայի առաջիկայ ժողովրդագրութեան մասին հաղորդում է հետևեալ հաշիւը։ Սկսեալ ներկայ տարուայ օգոստոսի 25-ից մինչև հոկտեմբերի վերջը, 1833 մեծ և 446 փոքրիկ արկղներով հաշուէ թերթեր ներկայացրին բիւրօյին։ Այդ թերթերից տպուած են 51 միլիոն, քաշն է մօտաւորապէս 10,000 պուդ։ Թերթերի պատրաստութեան և տեղեկութիւններ տալու համար գործադրուած է 109,178 մարկ։ Ներկայումս պարապած են բիւրօյում այդ ահագին քանակութեամբ թերթերի ջոկելովը և կարգաւորելովը։

⁂

Բիֆշտեկսի և ռոսբիֆի սիրողները։ Ֆրէդ Լինտօնը, Լօնդօնի „Երիտասարդներ“ կոչուած կլուբի գըլխաւոր խոհարարը, Նոյեմբերի մէկին յայտնեց այդ կլուբի դիրեկտօրին, որ նա մտադիր է ամուսնանալու և թէ նոր տարուց կը թողնէ իւր պաշտօնը։ Նոյն երեկոյին կլուբի սեղանատանը տարածուեցաւ այդ լուրը և հիւրերը յայտնեցին, թէ չեն կամենում զրկուել այնպիսի մի անձից, որը շատ լաւ պատրաստում է անգլիական մսեղէն կերակուրներ։ Այս պատճառով կլուբի դիրեկտօրը Լինտօնին առաջարկեց հետևեալ նոր պայմանները. 1) լաւ բնակարան բոլոր յարմարութիւններով և սեղանի արծաթեայ պարագաներով. 2) Տալ նրա կնոջը տարեկան 500 ֆ. ստեռլինգ ռոճիկ և ամեն մի նորածին երեխային 100 ֆ. ստեռլինգ. 3) Գիշերուայ ժամի 12-ից յետոյ, տալ կատարեալ ազատութիւն։ Լինտօնը համաձայնեցաւ և բիֆշտեկսի և ռոստբիֆ սիրողները բաւական մնացին։

⁂

Քարացած հսկայ.—„Voljgia“ լրագիրը այդ հսկայի գիւտի մասին հաղորդում է հետևեալը։ Վիկտորիայից (անգլիական Կոլումբիա) տասն մղոն հեռաւորութեամբ, երկու գիւղացիներ փոս քանդելու ժամանակ, գտան մի հսկայ մարդու քարացած դիակ։ Դիակը գայլախազ քարի պէս կարծր է և ունի 12 մետր հասակի բարձրութիւն։

ոյժ ու հնար են ունեցել՝ մեր գրչագիրների հարազատութեան հետ խառնել են իրենց պիղծ որոմը։ Գիտութեամբ ոչնչացրածների մասին այլևս խօսք չունիմ։

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով բանասէրը ինքնին կը հասկանայ, որ մեր եկեղ. պատմութեան համար նիւթ տուող անթիւ գրչագիրների միջից հարազատութիւն կրող օրինակների ընտրութիւնը անհնարին բան էր նոր մարդի համար։ Սրա համար հարկաւոր է մի ակադէմիական հաստատութիւն իւր օրգանով հայրենի հողի և մայրենի եկեղեցւոյ խնամքի տակ։

Միմիայն մի այսպիսի հաստատութիւն, հիմնուած վաստակի [illegible] օրէնքի վերայ, ունենալով իւր կոչման նպատակի համեմատ գիտնական պատրաստութիւն, ուսումնասիրութեան կամք ու կորով, մանաւանդ Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութեան անյագուրդ նախանձը, Փիլոնի ասածի նման՝ կարող էր հայրենի հնութեան փոշիների տակից հանել հինը և նորը, հարազատը և խառնածինը, ցորենը և որոմը. անպէտքն այրել, ոչնչացնել, պիտանին բանեցնել ազգի հոգւոյ, սրտի և մտաց շինութեան համար։

Այսպիսի մի ցանկալի հաստատութիւն ունենալը՝ մի քառորդ դար առաջ՝ ազգիս մտաւոր-բարոյական ուժերի եղելն էր։ Յաւերժայիշատակ բժ. Հոսխերդեանը, որ այդ ուժերի յենարանն ու շարժողն էր, իրենից էր սկըսել այդ վսեմ եղելին ծառայելու օրինակը տալ։ Նա իւր կրթական հանճարի բոլոր կարողութիւնը դրել էր Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան համար նիւթ հաւաքելու և ժողոված մշակելու և զտելու վերայ։ Այդ ինքնադատ հեղինակի անուան հետ անխզելի կերպով կապուած էր Հայաստ. առաքելական եկեղեցւոյ պատմութեան ուսումը խառնածին և օտարաշունչ որոմից սրբելու սուրբ աւանդը։

Ո՞վ արդեօք առաւել ձեռնհաս էր այս նուիրական աւանդը կատարելու։ Պատասխանը կարճ է և որոշ.—ս. Էջմիածնի միաբանութիւնը։ Մայր Աթոռի վերայ մի այսպիսի անակնկալութիւն դնելը չոր ու սնոտի բան չէր։ Էջմիածինը՝ թէև մեր քրիստոնէական պատմութեան ընթացքում երբէք դպրեվանք չէ եղել, բայց երջանկայիշատակ Փիլիպպոս կաթողիկոսից յետոյ՝ դրա միաբաններից շատերի մէջ մի առանձին սէր ու տենչանք է արծարծում հայրենեաց յիշատակներին բերան ու լեզու տալու։ Տակաւին Մխիթարեանք պարապելիս էին պապական խմորով ապականուած աստուածաբանական գրուածների թարգմանութեամբ, որ մեզ լուսաւորեն,—ս. Էջմիածնի նուիրակները փոյթ են անում Եղիշէ, Եղիշէն (1764) և Խորենացին (1695 թ.) տպելուն։ «[illegible]» [illegible] և ունելով զմեծ սրբութիւն անվայել էր աշխատութեանց երանելի արանց Աստուծոյ մնալ ըստ գանձու՝ ընդ երկրաւ ծածկելոյ... վասնորոյ զգանձատիպ և լուսեղէն գիրքս կամեցաք ի լոյս ածել“։

Էջմիածինը մի առանձին հակումն է ցոյց տալիս դէպի պատմական և հայրենագիտական գիտելիքները։ Մինչև անգամ Ղուկասի օրով, որ անուանի է ուսումը և գիտութիւնը Էջմիածնից հալածելով, տպագրվում է Յովսէփոսի պատմութիւնը, որ Փիլիպպոսի ժամանակ էր թարգմանուած։ Թէ որքան մեծ էր այդտեղ հայրենագիտութեան սէրը՝ կարելի է իմանալ նրանից, որ Սևանայ կղզին աքսորուած մի միաբան (Գիւլասարեանց Մինաս եպիսկոպոսը) կամենում է օգուտ հանել իւր պատժից հայրենագիտութեան համար.—Նա իւր աքսորանքի ժամանակը նուիրում է՝ Գեղամայ ծովակի շուրջը գտնուած հայրենի յիշատակների մանրազնին նկարագրութեան։

Որ յիրաւի այդ սէրը և ձգտումը եղել է Էջմիածնի նախկին միաբանութեան մէջ,—վկայ՝ Կիմիւշ Խանեցին, Թաղիաթեանը, Շահխաթունեանը, Ջալալեանցը, Աբէլ եպիսկոպոսը։ Եթէ սրանք քիչ են, թող յիշենք Շահնազարեանց Կարապետ վարդապետին։—Այս անունը արդէն մի ամբողջ գովասանքի արժէ։ Սխալ կը լինի կարծել, որ նա իւր գրականական գործունէութեան խթանը Պոլիս և Փարիզ ստացաւ։ Հայրենագիտական հարցասիրութիւնը նրա մէջ արծարծուած էր մինչև տպագրութիւնը, որովհետև 49 թ. Սիւնեաց առաջնորդ եղած ժամանակ՝ այդ երկրի ճիշտ ստորագրութիւնն է արած ամենամեծ խնամքով. *) Սա արդէն ապացոյց է, որ հայրենագիտական ուսման սէրը և հարցասիրութիւնը հետն էր տարած.

Եւրօպան միմիայն ազատել էր նրան՝ այդ սիրոյն բոլորանուէր սպասաւորութեան արգելքներից։

(Կը շարունակուի)

Բժ. Արամեանց.

---

*) Հետաքրքրական բան է նրա վերկայութեան խօսքերը՝ „Բազում խնամօք հոգացայ հեղինակել զճիշտ ստորագրութիւն այնորիկ (Սիւնեաց նահանգն) բաժանեալ զանազան գլուխս ըստ զանազանութեան նիւթոյն. ընչաւորութիւն, տեղագրութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, թուաբանութիւն, պատմութիւն, աւանդագրութիւն, աւանդութիւնք աշխարհին այլովք հանդերձ պարունակէին ի նմա։

Ո՞ր հայ է, որոյ ոչ լցէ լուեալ զգովանի գործս հայրենասիրութեան Դաւիթ-բէկի Սիւնեցւոյ... Սիրէի նստել բազում անգամ ընդ հովանեաւ ալևոր թեկնեաց Պեխ գեղջ և լսել զվէպս հարիւրամեայ Ստեփաննոս քահանային՝ թոռան գովելոյն Պալայ՝ միոյն յընկերաց Դաւթի։ Առ նմանէ նաև վստահ պատմութիւն քաջագործութեանց Դաւթի և եդի ի մատենադարանի ս. Էջմիածնի ընդ ձեռամբ Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի։

Երկս այս, որ կարէր սփռել լոյս մեծ ի վերայ նահանգին Սիւնեաց, եթէ մուծեալ էր ի տիպ, ըստ բազում գլխոց և ուղղել զվրիպակս բազմաց ի մատենագրաց. ողորմելի իմն հանդիպեցաւ օրհասի։ Ահագին գերոյ մի եկուլ զայն և անհետ արար զայն»...

Այս [illegible] Ներսէս Ե-ի անյագ ատելութիւնն էր դէպի Շահնազարեանց Կարապետ վարդապետը, որի հալածանքի ժամանակ հրամայուած էր այրել և ոչնչացնել ամեն բան, որ որպէս գրականական վաստակ այդ գիտնական վարդապետի անունն էր կրում և որ մնացել էին Էջմիածնում նրա փախուստից յետոյ...

Մեր գիտութեամբ գիտնական Շահազիզեանցի պրօգրամայով Սիւնեաց նահանգի ստորագրութեամբ պարապողը՝ այժմ Խուդավերդեանց Ներսէս եպիսկոպոսն է։ Երբ հայ բանասէրին բաժին կը լինի հնագէտ սրբազանի աշխատութիւնը՝—չը գիտենք։ Սակայն կարծում ենք՝ որ դա հետաքրքրաշարժ վաստակ պիտի լինի։ Մենք տեսած ենք Մայր Աթոռի մատենադարանին պատկանող „Օրբէլեանի Սիւնեաց պատմութեան“ օրինակը, ուր լուսանցքներում և տողերի մէջ՝ սրբազանի մատիտով նշանակուած բազմաթիւ ծանօթութիւններ ունի։ Այս ծանօթութիւնների բնաւորութիւնը մեզ իրաւունք տուեց կարծելու, որ հեղինակը քաջ ծանօթ է այդ նահանգի ստորագրութեան և անտեղի չէ մեր տեղեկութիւնը՝ թէ Ներսէս եպիսկոպոսը պարապած է Շահնազարեանի կորուստը կարելոյն չափ վերադարձնելու։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

17 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ալֆոնս Թագաւորի մահուան առթիւ Կայսերական պալատում 24 օր սուգ է նշանակուած։

«Минута» լրագրի հատով ծախելը արգելուած է։ Բժշկական դեպարտամէնտի առանձին նիստը, մասնակցութեամբ մի քանի նահանգական կառավարութիւնների նախագահների և բժշկական տեսուչների,—1886թ. անասունների ժանտախտի դէմ միջոցներ գործ դնելու համար նախագիծ է մշակել։

ՍԵՐԱԽՍ. Ռուսական և անգլիական Կոմմիսիաները, նոյեմբերի 14-ին, Զիւլֆիգարից գնացին Ակ-Ռօբատի վերայով, դէպի Խուագ-Խան սահմանագծի նշաններ դնելու համար։ Անգլիական կոմմիսիայի մի մասը վերադարձաւ Հնդկաստան։

ԼՕՆԴՕՆ. Առ ժամս յայտնի են կէս ընտրութիւնների հետևանքները. ընտրուած են 141 պահպանողականներ, 145 ազատականներ և 19 իրլանդացիներ։

ՍՕՖԻԱ. Համաձայն երեք պետութիւնների առաջարկութիւններին, որոնց հետ միացան նաև Անգլիան և Իտալիան, ինչպէս և Բելգրադի աւստրիական դեսպանի առաջարկութեան, որ եթէ Բօլղարիան շարունակէ իւր յարձակմունքները, այն ժամանակ աւստրիական զօրախումբը կը օգնէ Սերբիային, իշխան Ալէքսանդրը համոզուելով, որ Պիրոտի գրաւելովը, Բօլղարիան ստացաւ իւր բաւականութիւնը և վերականգնեցրեց զէնքի պատիւը, համաձայնեցաւ դադարեցնել պատերազմը և սկսել բանակցելու խաղաղութեան մասին։

18 Նոյեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երեկ օրհնեցին բժշկական օգնականուհիների դըպրոցը և եկեղեցին, որոնց հիմնել է ի յիշատակ Կայսերուհի Մարիա Ալէքսանդրովնի «Կարմիր Խաչի» հիւանդանոցի կանանց մասնաժողովը։ Շինութիւնը կառուցած է Կայսերուհու 300,000 րուբլի նուիրատուութեամբը։ Պետերբուրգի սլավոնական բարեգործական ընկերութիւնը կարգադրել է 10,000 ֆրանկ տալ պատերազմի զոհերին օգնելու համար և նոյն նպատակի համար ուղարկել սերբիական միտրոպոլիտ Միխայելին 1000 րուբլի և բանալ նուիրատուութիւնների ընդունելութիւն։

ՄԱԴՐԻԴ. Այրիացած Թագուհին ընդունեց երդումը. ժողովուրդը ուրախութեամբ դիմաւորեց նրան և նրա դուստրներին։

ՓԱՐԻԶ. Դօն-Կարլօսը յայտնում է, որ խնամակալութիւնը չի խաղաղացնիլ Սպանիային և թէ ինքը պատրաստ է հարկաւոր դէպքում ներքին պառակտման գլուխ անցնելու։

ՎԵՆՆԱ. Անգլիան չի միանում պետութիւնների դեսպանաժողովում արած վճռի հետ։

ՊԻՐՕՏ. Վիդդինի բերդապետը հեռագրում է թէ նոյեմբերի 17-ին, գիշերը սերբերը յարձակումն գործեցին, բայց մեծ վնասներով յետ մղուեցան։ Յարձակումը եղաւ այն ժամանակ, երբ իշխանը համաձայնել էր դադարեցնել թշնամական գործողութիւնները։ Այդ պատճառով բօլղարական կառավարութիւնը յայտնեց այդ փաստի մասին պետութիւնների ներկայացուցիչներին, խնդրելով ստուգել այդ բանը հիւպատոսների միջոցով,

ԲԵԼԳՐԱԴ. Պիրօտի և Աք-Փալանգի մէջ զինադադարման գիծը նշանակուած է։ Վիդդինի նահանգի մեծ մասը սերբերի ձեռքումն է։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[illegible]

Դասագիրք ինքնաուսուցիչ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ.

Ծախվում է Թիֆլիսում Կենդրոնական գրավաճառանոցում և Էջմիածին հեղինակի մօտ։

Գինն է 20 կոպ.

10—8

Ուրբաթ, նոյեմբերի 22-ին, (նախկին) Արծրունու Թատրոնում դրամատիկական նորակազմ հայ դերասանական խումբը կը տայ

I

Ա Ր Շ Ա Կ Բ.

Ողբերգութիւն 5 գործողութեամբ հեղ. Գալֆայեանի.

II

ՏԵՐ ՄԱՏԻՄԱՏԻԿՈՍԸ

Նոր վոդ. 1 գործողութեամբ

Սկիզբն է 7½ ժամին

Տոմսակները ծախվում է արդէն կասսայում։

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՌՈՒ և ԸՆԿ.

(Ц. 2342.) 48—44

Լոյս տեսան Ֆ. Շմիդի

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

Երկրորդ տիպ։

(Գինն է 40 կոպ.)

—

ԳԷՈՐԳ ՎԱՇԻՆԳԹՕՆ

Երկրորդ տիպ.

(Գինն է 60 կոպ.)

Թարգ. գերմ. Փ. Վարդանեան.

Վաճառվում են Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԿԱԹԻ, ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ և ՈՒՐԻՇ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՌՕԲԵՐՏ ՊԵՏԵՐՍ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ո Ւ Մ

Դվորցովի փողոց, տ. երբեմն Արծրունիի, № 156, 160.

6—1

Կիւրակի, 24-ին, առաւօտեան 11 ժամին, Քաղաքային տան դահլիճում նշանակուած է ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ընդհանուր ժողովը՝

Հաստատելու—1883 և 1884-ի վերաստուգուած հաշիւները.

Ընտրելու—Ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, խորհրդի չորս անդամ՝ հինգ փոխանդամ։

2—1

„ԲՕՐՄԱՆԻ" ԲԱԼԶԱՄ

Թոյլ է տրուած բժշկական խորհրդից, և գործ է դրվում դըրսից ոսկրային (ռեվմատիզմի) ցաւերի դէմ։ Գլխաւոր պահեստը Պետերբուրգում. Բոլշայա-Կանիւշէննայա № 14—22, Թիֆլիս և Բագու. Դեղագործական առևտրի Կովկասեան ընկերութեան մէջ։ 32—22

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է, որ սոյն Նոյեմբեր ամսի 26-ին, ժամի 12-ին նրա խորհրդարանում, Հաւլաբարի քաղաքային հողից գաջ հանելու համար նշանակուած է աճուրդ։ Գետինը ունի 229 դեսեատին և 1560 քառ. մղոն տարածութիւն, գտնվում է Հաւլաբարում, քաղաքի արուարձանում։ Պայմանը կը կապուի երեք տարով։ Աճուրդին մասնակցելու ցանկացողները, կարող են տեսնել պայմանները վարչութեան կանցելիարիայում, առաւօտեան ինն ժամից մինչև կէս աւուր երկուսը։

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է, որ սոյն նոյեմբեր ամսի 30-ին, ժամի 12-ին, նրա խորհրդարանում, կապալով տալու համար, աճուրդի կենթարկուեն հետևեալ կալքերը. 1) Հաւլաբարի քաղաքային պատկանելի երկու կտոր հող մինը՝ 1890 դեսեատին և 2040 քառակուսի սաժէն տարածութեամբ, իսկ միւսը՝ 275 դեսեատին, արօտի, հողագործութեան և այլ տնտեսական պարապմունքների համար, սկսեալ 1886 թ. յունվարի մէկից երեք տարի ժամանակով և 2) Մուխրանի և Սաղի փողոցների մէջ գտնուած Կուր գետի վերայի պարոմի կապալով վերցնելու իրաւունքը, նոյնպէս 1886 թ. յունվարի մէկից, երեք տարի ժամանակով։ Աճուրդին մասնակցելու ցանկացողները, մինչև աճուրդի օրը, ամեն օր, բացի կիւրակի և տօն օրերից, կարող են տեսնել պայմանները վարչութեան կանցելիարիայում, առաւօտեան 9-ը ժամից մինչև 2-ը։

3—3

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՋԻՆԳԵՐԻ

Նիւ-Եօրկում



ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՏԱՆԸ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ

Որը արժանացել է Ամստերդամի համաշխարհական հանդիսին 1883-ին

Միակ ամենաբարձր պարգևը պատուաւոր դիպլօմ

THE SINGER MFG. CO. N.Y.
TRADE MARK

Մօտ օրերում ստացվել մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր գործիքներով և նոր ստներով, որոնք առանց աղմուկի թեթևութեամբ բանում են, այնպէս որ ամենաթոյլ մարդիկ և ծերունիներն անգամ, առանց ոյժ գործ դնելու կարող են գործածել։ Այս մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում։ Սա ամենալաւ ապացոյցն է թէ ինչ լաւ յատկութիւն ունին ՋԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ։

Նախազգուշութիւն. Ջինգերի իսկական կարեմեքենաները մեծ համբաւ ունին, որովհետև իրենց գեղեցիկ յատկութիւններով և յարմարութեամբը զմայլեցնում են ամենքին և հէնց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրերը կեղծում են և Ջինգերի իսկական մեքենայի անունով ծախում։ Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Ջինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Ջինգերի» ֆիրման մեքենայի կոթի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները։ Ջինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակամիջոց ստանալ դրամը վճարելու համար, առանց իսկական գինը բարձրացնելու։ Հին մեքենան մաղաղինում կարելի է փոխել։ Մեքենաները ունին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս, մեքենայ և այլն և այլն։

ԹԻՖԼԻՍ, Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՈՎԻ

Բաժանումներ. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Զէրէկովի, բուլվարի հանդէպ։ ԲԱԳՈՒԻ մէջ, Միքայէլեան փողոց, տուն Միրզա-Աւագովի։ ԲԱԹՈՒՄ, Պոլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի։ Այս մեքենաների մշտական պահեստներ գտնվում են նաև Ղարս, Ելիսաւէտօպօլ, Ալէքսանդրապօլ, Շուշի, Պետրովսկ, Ասխաբադ և Երևան քաղաքներում։

60—40

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го Ноября 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.